«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԹԵՄԱ
ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀՐ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ

<<ԱՇՆԱՆ ԱՐԵՎ>> ՎԻՊԱԿՈՒՄ

ԱՌԱՐԿԱ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<ՍԵՎԱՆԻ № 6 ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Բովանդակություն

1. Ներածություն ……3

2. <<Աշնան արև>> ……..5

3. Եզրակացություն…… 17

4. Օգտագործած գրականության ցանկ……18

<<… Առասպելի ջրհեղեղը եթե կրկնվեր՝ պես կարող էի վերստեղծել անասնապահության մեծ մշակույթները … գականներիս ու երկրացիներիս այն օրերի քից կարող էի նորից ժողովել մարդկային յականության օրենսգիրքը…>>:

Հրանտ Մաթևոսյան

Ներածություն

Արդի ինֆորմացիոն աղբյուրների բազմազանության մեջ ավելի է կարևորվում գրականության դերը մատաղ սերնդի աշխարհայացքի ձևավորման գործում: Շատ կարևոր է, որ սովորողները կարողանան գնահատել սեփական երկրի սոցիալ – տնտեսական, քաղաքական, գիտական մտքի զարգացումները, արժևորել տնտեսական հաջողությունների նշանակությունը, մեր երկրին սպառնացող վտանգներն ու մարտահրավերները և իրենց դերը հայրենիք կերտելու գործում:

Գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու հեղինակի ասելիքը, հերոսների արարքների դրդապատճառները: Գրական հե

Նոյան հողագործության և ազ- վար- բարո-

րոսների արարքների, բնավորության վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու, ճանաչելու ինքն իրեն և այլ մարդկանց, և այս ամենի շնորհիվ սովորողը կկարողանա կյանքում հարաբերություններ հաստատել, ճիշտ հաղորդակցվել մարդկանց հետ: Այս ամենը առավել խիստ անհրաժեշտ է մեր օրերում, երբ սոցիալ – տնտեսական և քաղաքական իրավիճակը բարդացնում է անհատի կայացման, նրա կայուն բարոյահոգեբանական աշխարհայացքի ձևավորման գործընթացները:

Այս առումով հետաքրքիր գաղափարներ է արծարծում Հրանտ Մաթևոսյանի ողջ ստեղծագործությունը, մասնավորապես ,,Աշնան արև” վիպակը: Մաթևոսյանի ստեղծագործության օբյեկտը գյուղն է և գյուղաշխարհի մարդիկ: Սակայն գյուղն է գրողի արտացոլման օբյեկտը, թե քաղաքը, երկու դեպքում էլ խնդիրը մարդու ներաշխարհի բացահայտումն է, նրա կերպավորումը: Եվ քանի որ Հր. Մաթևոսյանի ստեղծագործությունն ուսումնասիրվում է 12-րդ դասարանում, ապա սովորողներին հասկանալի կլինի գրողի ասելիքը և խորհելու տեղիք կտա, նրանք կկարողանան ըստ արժանվույն գնահատել այդ երկը:

Այս աշխատանքի նպատակն է ներկայացնել Հր. Մաթևոսյանի ,,Աշնան արև” վիպակը, գաղափարը, արծարծվող խնդիրները և հերոսների աշխարհայացքը:

ԱՇՆԱՆ ԱՐԵՎ

<< … Շատ կուզենայի՝ որ իմ հովիտը մեծ ու արևոտ լիներ, կուզենայի, որ նրա բնակիչները միայն լավ մարդիկ լինեին ու վատերի համար իմ հովտում տեղ չլիներ, որ մարդկանց կյանքը ծաղկեր լավ ժամանակներում և պատերազմն ու խեղճ թշնամանքը իմ հովիտ խուժելու միջոց չունենային…>> - այսպես է դի–մում Հրանտ Մաթևոսյանը իր ընթերցողներին: (Երկեր, հատոր 1, էջ 3, 1985թ)

Հրանտ Մաթևոսյանի հովիտը Ծմակուտն է, Անտառամեջը, Ահնիձորը՝ հովվերգական աշխարհ, որ իչպես գրողն է ասում, << շատ ավելի Թումանյանի-Տելստոյի – Քսենոփոնի ժամանակներին էր մոտ, քան մեր այսօրվան>>: Պատկե-րելով կենսական նոր հարաբերությունների մեջ հայտնված գյուղը՝ նա ստեղ-ծում է ազգային գրականություն: Տոհմի կանչին ունկնդիր և երկրի ջիղը լինելու իրենց կոչմանը հավատարիմ մաթևոսյանական կերպարները հայ գրականության մնայուն արժեքներից են: Հրանտ Մաթևոսյանի արձակը կերպարների մտածողու-թյամբ և հոգեբանությամբ խորապես ազգային ու համամարդկային է:

Առհասարակ գրողի խնդիրը մարդկային բազմատեսակ հարաբերությունների, մարդկանց ներաշխարհի, նրանց կապերի, ձգտումների, երազների ու վարքագծի

բացահայտումն է: Մարդիկ կապված են միմյանց հետ հարևանությամբ, ազգակ-

ցական կապերով, ունեն իրենց մարդկային արժանապատվությունը, կյանքի ար-

ժեքները գնահատելու իրենց սկզբունքները: Հրանտ Մաթևոսյանի արձակում,

լինի դա ,,Աշնան արև", ,,Մենք ենք, մեր սարերը", ,,Գոմեշը" , ,,Խումհար" , ,,Տերը"

վիպակները, թե պատմվածքները, հայ գյուղը երևում է ժողովրդի ճակատագրում

ունեցած իմաստային նոր դերով:

Հրանտ Մաթևոսյանի ,,Աշնան արև" վիպակը նոր խոսք է ազգային գրականու-

թյան մեջ: Գրողը կերտում է կերպարներ, որոնք արտահայտում են մի կողմից

հայրերի ու որդիների, մյուս կողմից գյուղի ու քաղաքի գոյաբանական առանձ-

նահատկությունները: ,,Աշնան արև" վիպակը երեք սերունդ է ներկայացնում,

երեք սերնդի հոգեբանությունն ու արժեքային համակարգը: Երեք սերնդի հերոս-

ները ատաղձվում են են վիպակի հերոսուհու՝ Աղունի կերպարին, բացահայտում

ու լրացնում են մեկը մյուսին:

Վիպակի համար Մաթևոսյանն ընտրել է վերհուշի ձևը: Ժամանակային այս

համակցումը բացահայտում է տարբեր սերունդների աշխարհայացքը, նրանց

բարոյահոգեբանական աշխարհընկալումը, ավագ և կրտսեր սերունդների մտածե-

կերպը, միմյանց նկատմամբ վերաբերմունքը, գյուղի և քաղաքի հակադրությունը:

Եվ քանի որ Մաթևոսյանի բոլոր ստեղծագործություններում արտացոլվում է հայ

գյուղն ու գյուղացու կյանքը, աշխատանքը, գրողին համարում են գյու ղագիր:

60 – ական թվականների կեսերին սկզբնավորված այս արձակը պատկերում է գյուղաշխարհի անցյալն ու ներկան, իսկ գյուղաշխարհի մարդիկ ձգտում են մոտենալ քաղաքին ու քաղաքային կյանքին: Քաղաքակրթությունը մտել է գյուղ և գյուղացին արդեն իր կենցաղով, մտածելակերպով մոտենում է քաղաքին:

Վիպակում հիմնական սյուժեն զարգանում է հերոսուհու վերհուշի միքոցով: Աղունը գնում է քաղաք՝ որդուն ամուսնացնելու, և իր ունեցվածքից բաժին է հա-

նում որդուն: Այդ ընթացքում Աղունի հուշերի միքոցով մեր առջև պատկերվում է նրա ողջ կյանքը՝ իր ծննդից մինչև ներկան: Վիպակի բոլոր կերպարները մարդիկ են՝ իրենց հոգսերով, ծանր հիշողություններով, երազանքներով և ամենակաևորը՝ ապագայի նկատմամբ ունեցած ակնկալիքներով: Եվ բոլոր հերոսներն էլ՝ Աղունը, Սիմոնը, սկեսուրը, Աբել ապին, Սերոն, Արմենակը և այլք, ունեն իրենց ուրույն աշխարհայացքը: Տարբեր արժեքային համակարգում են ապրում հատկապես վիպակի կին հերոսները. նրանցից յուրաքանչյուրը դժգոհ է իրեն բաժին հասած կյանքի ժամանակից:

Վիպակի հերոսուհին՝ Աղունը, անհերքելի խռովքի մեջ է: Նա ,, սառը պատերազմի” մեջ է ,,Ծմակուտի” դեմ: Սիմոնենց ընտանիքն է նրա Ծմակուտը, նրանց

դեմ է նրա պատերազմը: Այստեղ՝ այս ընտանիքում պիտի իրականանային Աղունի փայփայած երազները, կյանքը պետք է իր ցանկալի գույները գտներ, և Աղունը թերևս միշտ Աղունիկ պիտի մնար, ոչ թե դառնար ,,առնաուտ” հալածյալ վանքերեցի ,,անիծյալ ցեղի” ներկայացուցիչ: Երկնամերձ դղյակներ չեն եղել Աղունի երազածները, և ոչ էլ նա երբևէ մտածել է անհոգ ու ցոփ կյանքի մասին: Հարկ

եղած դեպքում տղամարդու պես մաճ է բռնել, վար արել ու չի տրտնջացել:

Հոգեկան բավականություն. այս մասին է խոսքը, կարոտով սրան է սպասել վանքերեցի դեռատի աղջնակը, սպասել է ողջ կյանքում և չի գտել: Չեն գնահատել նրան Սիմոնենց տանը, ուր հարս էր գնացել, և այդ դեպքում արդեն երազային ցանկությունները, ջերմությունը փոխակերպվում են տենդի, խռովվում է հոգին, և հոգեկան անսպառ ուժ է հարկավոր այդ կյանքի հետ հաշտվելու և կյանքի դժվարությունները տանելու. ,,o~ֆ, երանի կանաչ գերեզմանոցում ննջողներին" (Երկեր, 1985թ. հ. 2, էջ100) :

Աղունը օժտված է հոգևոր մեծ ուժով: Հակառակ ափերում են մնացել Աղունի երազանքն ու իրականությունը: Նա ոչ միայն չի գտել ,,լավը", այլև ծեծվել ու հալածվել է, այդ պատճառով էլ արդարացի են նրա բողոքն ու խռովքը: Այստեղից էլ, անառարկելիորեն կեսաձև դարձած, երբեք, ոչ մի պարագայում տեղի չտվող հստակ դիրքորոշում և ներքին անբավարարվածություն, բնականաբար նաև՝ երբեք չխաղաղվող մարդկային խոր դրամա, որը չի հանդուրժում ոչ մի կարծիք:

Աղունը տարբերվում է մեր գրականության մեջ եղած կանանց կերպարներից: Կարծում եմ, որ սովորողը անմիջապես կտեսնի այդ տարբերությունը , համեմատություն կանցկացնի համեստ, իրենց ամուսիններին հնազանդ, նահապետական

հայ կնոջ և ուժեղ կամքի տեր, համառ, ինչ - որ տեղ նաև ագրեսիվ Աղունի միջև:

Սակայն Աղունի ագրեսիվությունը կարելի է նաև արդարացնել, քանի որ ապրած

կյանքն է նրան այդպես դարձրել: Նա երազանքներ ուներ , սակայն նրա երազանքները փշրվում են սկսած խորթ մոր դաժան վերաբերմունքից, որին հաջոր-

դում են ամուսնությունից հետո ապրած վիշտն ու տառապանքը, ամուսնու ընտա-

նիքի հետ ունեցած վեճերը: Նա նպատակասլաց անձնավորություն է, ձգտում է

համառորեն, թեկուզ զոհողությունների գնով, ծեծվելով հասնել իր նպատակին:

,,… այդ տան ամեն մի իրը ստեղծվել է ծեծվելու գնով…” (Երկեր, 1985թ. հ. 2,

էջ23) :

Աղունի բնավորությունը հակասություններով լի է: Մի դեպքում մենք տեսնում

ենք աշխատասեր, տոկուն, հոգատար, նպատակասլաց մի կնոջ, որը ամեն զոհո-

ղության գնում է, միայն թե ստեղծի իր տունը, ապրուստը, երջանիկ լինի իր ըն-

տանիքով, սիրի և սիրվի, զավակներին տեսնի ապահով ու երջանիկ: Մյուս դեպ-

քում տեսնում ենք հոգնած, չար, ,,ջղային”, անհանգիստ, խայթող ու ծաղրող մի

կնոջ, որին չի բավարարում ոչինչ ու ոչ ոք: Նա խայթում ու ծաղրում է սկեսրոջը,

Սիմոնին, Աբել տեգորը, հարևանուհի Արուսին, քանի որ ինքն ,,անհաշտ է, լավ

կլինեն՝ լավ կլինեմ, վատ եղան՝ վատ, ես անհաշտ եմ: …Ամեն ոք ինձանից ար-

ժանին է ստանում … (Երկեր, 1985թ. հ. 2, էջ29-30) :

Քաղաքի հանդեպ ունեցած մտահոգությունները Աղունին ստիպում են վերա-

պրել գյուղի՝ իր բարդ, բազմաչարչար կյանքը: Նա համեմատում է իր ,,հոր պա-

լատները և ամուսնու գոմը”: Նա հակամարտության մեջ է շրջապատի հետ,

որովհետև ապրելու իր եղանակը փորձում է պարտադրել շրջապատին: Նա դեմ է

համակերպությանը, խոնարհ չի, Սիմոնի ցեղին համարում է լալկան ու փափուկ,

և իր հայր Իշխանից ժառանգած մաքառող, մարտական վարքագիծը հակադրում է

նրանց: Կյանքի վերաբերյալ Աղունն ունի իր փիլիսոփայությունը: Նրա կարծիքով կյանքը մարդուն տրվում էմեկ անգամ, ուստի պետք է այն ապրել արժանավայել: Սակայն Աղունը գիտակցում է, որ հաճախ ազնվությունն ու լավ ապրելը չեն համատեղվում, ,,Լավն այն է, որ ունեցվի լավ ապրելու հետ մաքուր անուն էլ": Նա փոքր որդուն հորդորում է ճիշտ ապրել, քանի որ ,, ճանապարհները շատ են, կամքը՝ մեկ":

Սակայն Մաթևոսյանը Աղունին իդեալ կերպար չի դարձնում, որովհետև Աղունի

փիլիսոփայությունն ու վարքագիծը ունեն իրենց թերի կողմերը: Նրա կյանքը զըրկանքների շարան է, գրեթե չկա ուրախություն, հրճվանք ու սեր: Ինչ-որ բանի հասնելու նրա տենդագին ձգտումը դժգոհություն է առաջացնում մերձավորների մեջ: Նա մերժված է, չգնահատված, օտարված, ,,առնաուտ", ջղախտով հիվանդ:

Գրողը Աղունի կերպարով անդրադառնում է հայ կնոջ հիմնախնդիրներին: Չսիրած ամուսնուն հավատարիմ Աղունը ցանկանում է լինել երջանիկ ու գնահատված, սակայն չի սիրում և չի ընդունում սկեսրոջ հնազանդությունը, իր վիճակի հետ հաշտ ապրելու նրա համառությունը: ,,Կինը կին է …Քսանհինգ տարի

է էս տանն ես, սրտից եկած մի խոսք չես ասել երեխուս: Կինը կին պիտի լինի …" (Երկեր, 1985թ. հ. 2, էջ29): Աղունի աշխարհայացքը իր տեսակի մեջ ձևա-

վորվել է ոչ որպես սիրող կնոջ աշխարհայացք, ով իր ամուսնու հետ միասին մի լծի լծված եզների նման իրար հասկանում են ու իրար խնայում, այլ՝ ձևավորվել է ինքնահաստատման ձգտող մարդու աշխարհայացք, որով նա փորձում է գտնել և հաստատել իր ,,ես"-ը: Աշխարհայացքների բախումների միջոցով, հանձին Աղունի և սկեսրոջ՝ գրողը կերտել է երկու իրարամերժ, արժեքային տարբեր

համակարգ ունեցող կերպարներ: Սկեսուրն իր ամուսնու և ընտանիքի համար կայացել է որպես մի հեզ հայուհի (չնայած կողպեքածեծ էր տալիս Աղունին), իսկ Աղունի աշխարհայացքը ձևավորվել և նա ինքնահաստատվել է՝հոր փուչ անունը բարձրացնելու, սեփական հպարտությունը արժևորելու, և իր ես-ի հիվանդագին ճշմարտացիությունն ապացուցելու համար հաղթահարելով մեծագույն արգելքներ.

Աղունի արժեքային համակարգը տրոհված է, որը ավելի է մեծանում՝ պայմանավորված քաղաքում տղայի ու հարսի հետ սպասվելիք հանդիպման մտահոգությամբ: Նա քաղաք է գնում իր անծանոթ հարսին նվերներով ողողելու՝ չմտածելով, որ նա կարող է իր ստեղծածը ամենևին էլ չարժևորել: Աղունը ձգտում է ինքնահաստատման ոչ թե դիմացինի հանդեպ ունեցած սիրուց, այլ հանուն սեփական ճշմարտացիության ապացույցի: Նա դժգոհում է ամուսնու՝ Սիմոնի ընտանիքից, իր ճակատագրից, ,,…աշխարհը լիքը տղա, գնա, Աղունիկ, Սիմոնից մարդ սարքիր, գոմից տուն սարքիր, Արմենակից Արմենակ սարքիր…” (Երկեր, 1985թ. հ. 2, էջ8):

Աղունը, չնայած ժրաջան, մեղվի նման աշխատանքին, չի հասել ունևորության այն մակարդակին, որի մասին երազում էր, և այստեղից էլ ծայր է առնում նրա՝ սոցիալական անհանդուրժողականությունը շրջապատի նկատմամբ: Նա հպարտ է, որ, ի տարբերություն հարևանների՝ որդուն բաժին է հանում իր քրտինքով ստեղծած ունեցվածքից. ,, Արտաշը կոլխոզը կողոպտեց, կողոպտեց, կողոպտեց, իսկ տղայի բաժինքը մի գորգ էր ու մի անկողին …” (Երկեր, 1985թ. հ. 2, էջ7): Նա վի-

պակի սկզբից մինչև վերջ բանավիճում է իր հետ, Սիմոնի հետ, սկեսուրի ու Ա-

րուսի հետ, և ի վերջո նրա բանավեճը իրականության հետ է: Չիրականացած երա-

զանքները նրան օժտել են հիմնավորված և չհիմնավորված ձգտումներով: Հիմնա-

վորվածության վկայությունն է նրա՝ ,,Հիմա գնա ասա, որ Սիմոնի Աղունը մի

կարպետով բաժանվեց, իսկ հիմա տղայի համար դաշնամուր է առնում …”(Երկեր,

1985թ. հ. 2, էջ 39): Չհիմնավորված է, քանի որ նա չի հանդուրժում ոչինչ և ոչ

ոքի, որովհետև կարծում է, որ կյանքը փորձությունների է ենթարկել միայն իրեն:

Նա չի ընդունում, որ և՛ ինքը, և՛ հարևանուհի Արուսը նույն գյուղում, նույն կյան-

քով են ապրում: Բայց Արուսը իր կյանքով ուրախ է, իսկ Աղունը չի ուրախանում,

և ինքը դա հասկանում է: Թեև կյանքի հարվածները զգալիորեն դառնացրել են

Աղունին, բայց նա լալկան ու հոռետես չէ: Նա հավատով է նայում վաղվա օրվան,

Արմենակ որդու ապագային:

Վիպակի բոլոր կերպարները հանդես են գալիս Աղունի հետ ունեցած առնչու-

թյամբ: Որքան վառ, գունեղ և ըմբոստ է Աղունի կերպարը, նույնքան հանդուրժող,

հանգիստ և առաջին հայացքից անճար է Սիմոնը: Իր խեղճ բնավորության պատ-

ճառով ,,Սիմոն” անունը Աղունի բառապաշարում օգտագործվում է իբրև անճա-

րակության, անկարողության հոմանիշ: Սիմոնը աշխատավոր մարդ է, իր ընտանի-

քի ապրուստը հոգալու համար գիշեր – ցերեկ աշխատում է, իր կյանքում մի բան

գիտե՝ հանդի ու տան ճանապարհը: Նա իր ընտանիքի անդամների հանդեպ մեծ

պատասխանատվություն ունի, նաև մի հստակ կողմնորոշում ունի՝ պահպանել ընտանիքը, թեկուզ և իրեն չսիրող կնոջ հետ: Իսկ Սիմոնի դավաճանությունը Սոնայի հետ սոսկ տղամարդկային էգոյի ինքնահաստատման փորձ է: Նա իր տղամարդկային առավելությունները հաստատելու, բայց ավելի շուտ՝ սրտնեղությունից՝ տարբեր առիթներով ծեծել է Աղունին, բայց պարտվողը միշտ ինքն է եղել, որովհետև ,,մեծ իրավացին ինքն էր, բայց փաստական ճիշտը՝ Աղունը" (Երկեր, 1985թ. հ. 2, էջ 61): Սիմոնը հոգու խորքում դեմ էր Աղունի քաղաք գնա-

լուն, բայց գերադասում էր լռել՝ թաքցնելով իր՝ Աղունի հանդեպ տարիներով կուտակած վախը: Սիմոնը չի սիրում Աղունին. ,, եթե մեր մեջ սիրո պես մի բան

եղել է՝ այդ եղել է Զորագէս կայարանի լուսավոր խանութում" (Երկեր, 1985թ. հ. 2, էջ 15): Սակայն նրանք շարունակում են իրենց համատեղ կյանքը, պահպանում

են դառնությամբ ստեղծած իրենց խաբուսիկ բարեկեցության պտուղները՝ հանուն

հասարակական կարծիքի:

Աղունի աչքին միշտ մեղավոր Սիմոնը ոչ մի ձևով չի կարողանում բավարա-

րել կնոջ ցանկությունները և հերթական անգամ ջղայնանում է, երբ ուշանում է

Աղունին քաղաք ճանապարհելիս: Սիմոնն էլ է դժվար կյանք ապրել, կյանքը իր

դժվարություններով և Աղունն իր դժգոհություններով նրան դրել են ծանր վիճա-

կի մեջ: Նա ապրում է չսիրած կնոջ հետ, այդ պատճառով էլ կնոջը պատվիրում

է, որ տղային համոզի, որ չշտապի և զագս չգնա: Սրանով Սիմոնն ուզում էր և

իր հայրական դիրքը շեշտել, և՛ միաժամանակ որդուն ազատել անհաջող ամուս-նության վտանգից: Սիմոնը իր արժեքային համակարգով մարդկային տեսակ է, որը հայտնագործել և կերպավորել է գրողը: Աղունի և Սիմոնի կերպարները լրացնում են միմյանց: Նրանք իրենց արժեքային համակարգով և հակադրվում են իրար, և՛ միասնական են, և դրանով հաստատում են կյանքի ամբողջությունն

ու լիարժեքությունը:

,,Աշնան արև" վիպակի ավագ սերնդի ներկայացուցիչները՝ Աղունի սկեսայր Աբելը, հայր՝ Իշխանը, սկեսուրը արտահայտում են իրենց ապրած ժամանակա-շրջանի աշխարհընկալումը: Նրանք երեք սերնդի հերոսներից առանձնա-նում են իրենց արժեքային համակարգով: Այստեղ առկա է նաև հայրեր և որդիներ

հակադրությունը: Ավագ սերունդը ավելի հակված է նահապետական վարք ու բարքին, պահպանում է սերնդեսերունդ փոխանցված բարոյահոգեբանական հատ-կանիշները, հակված է ավելի պահպանողական կեսաձևի: Այդ է պատճառը, որ Աղունը ասում է. ,,Կռիվ չկա, կամք չկա, լավ ապրելու ցանկություն չկա, կարտոլ է՝ կարտոլ կեր" (Երկեր, 1985թ. հ. 2, էջ 7):

Աղունի սկեսայրը՝ Աբելը, վաղուց չկա, նրան հիշում է Աղունը, նրան մենք տեսնում ենք Աղուն ի հուշերի մեջ: Աբել ապին ծանր ու խիստ, սարերի նման չոր ու կոպիտ բնավորությամբ, նահապետական նիստ ու կացին վարժված ընտանիքի հայր է: Նա վիպակի ավագ սերնդի այն ներկայացուցիչն է, որին խորթ է ամենաառօրեական տոնականությունը, եթե դրանում չկա նյութա կանը:

Աբելն ու Արուսը Իշխանի տնից հարս են բերել մեծ օժիտի ակնկալիքով: Եվ հանկարծ ,,կնյազ Իշխանի" աղջիկը Ծմակուտ է գալիս ,,դատարկ օժիտով":

Նա ծաղրում է Աղունին, առանց օժիտ հարս գալու համար. ,,կնյազ Իշխանի տա-

նը էլ բան թողել ես, թե եղածը էս է. սրբել բերել ես, աղչի”,- ասում է Աբել ապին:

Աղունի հայրը՝ Իշխանը ևս Աբելի նման նույն ժամանկի և իրականության

ծնունդ է: Աղունը երեք օրական է եղել, երբ Իշխան հոր հարվածից մահացել է

Շողեր մայրը: Այդ նույն Իշխանն է ասել, որ ,,թոռը լավ տղա դառնա” , թևի ժա-

մացույց է առնելու: Այս երկու փոքրիկ դիպվածով բացահայտվում է էականը.

Նախ՝ Իշխանը խփել է կնոջը ոչ սպանելու մտադրությամբ, հետո՝ թոռան ,, լավ

տղա դառնալու” պապի ցանկությունը, նաև երազանքը: Դրանք ընդունված են

եղել, դրանք նահապետականության արտահայտությունն են և բնական կեցություն:

Այստեղից կարող ենք ասել, որ Իշխանը և Աբելը, թեև տարբեր, բայց սերնդակից

են, և նրանց կեցությունը, աշխարհայացքը նույն ժաամանակշրջանին բնորոշ

երևույթներ են:

Աղունի ներաշխարհում չարի պատկերացման երկու մակարդակ կա՝ Իշխանը

խորթ մոր հետ և սկեսուրը: Եթե Իշխանը իր արարքով ոչ մի արդարացման չի

արժանանում, ապա պառավ սկեսուրին նա խղճում է: Դա նաև սերնդային ան-

համաձայնության վկայություն է: Ագրեսիվ Աղունին սկեսուրը խրատում է. ,,վատ

եմ եղել … Աստված ինձ վատ է ստեղծել՝ վատ եմ եղել … ես քեզ խրատ՝ հարս-

ներիդ հետ դու լավ կլինես” (Երկեր, 1985թ. հ. 2, էջ 28): Նա իրենից դժգոհ հարսին

հասկացնում է, որ իրենով չէր պայմանավորված Աղունի երջանկությունը. Նա իր

ունեցածից այդքանն է կարողացել տալ նրան. ,, Իմ ունեցածը գոմ էր, գոմ էի

տվել” (Երկեր, 1985թ. հ. 2, էջ29): Սկեսուրը նահապետական մտայնության տեր

է և իր խարդավանքներով փորձում էր աջակցել տղայի կյանքի բարօրությանը:

Չնայած հարսը և սկեսուրը տարբեր սերունդների կանայք են, սակայն բոլոր

դեպքերում նրանց կարծիքները համընկնում են Սիմոն մարդու և ամուսնու գնա-

հատման հարցում: Մայրը որդուն սեր ու գուրգուրանք է կամենում, կինը՝ բարե-

կեցիկ ապրելակերպ: Եթե կյանքի դժվարությունները Աղունին չարացրել են, և նա

հիշաչար է, ապա նանին դարձել է մեծահոգի, և նա ներողամտությամբ է վերա-

բերվում Աղունի խայթոցներին:

Վիպակում Հրանտ Մաթևոսյանն Աղունին հակադրում է հարևանուհի Արուսին:

Այս երկուսը միանգամայն տարբեր արժեքային համակարգի ներկայացուցիչներ

են, որի բացահայտման գագաթնակետը Աղունի և Արուսի երկխոսությունն է: Ա-

ղունը՝ ջղագրգիռ, ջղային, Արուսը՝ հավասարակշռված, գյուղական կյանքում

կոփված կնոջ կերպար: Արուսը, ի տարբերություն Աղունի, գոհանում է իր ունե-

ցածով, գնահատում է իր ամուսնուն, ուրախ ու հեշտ է ապրում և նախատում

է Աղունին. ,,Աշխարհը հեշտ է, Աղուն, բայց դու դժվարացնում ես ու քեզ էլ ես

սպանում, ուրիշներին էլ” (Երկեր, 1985թ. հ. 2, էջ 37):

Ի տարբերություն Աղունի՝Արուսը, սկեսուրը, հորաքույր Մանուշակը, որին մենք

հանդիպում ենք նորից Աղունի հուշերում, ավանդապաշտ մտայնության տեր

կանայք են:

Հետաքրքիր աշխարհայացքի տեր են վիպակի երրորդ սերնդի հերոսները՝ Սերոն ու Արմենակը՝ Աղունի որդիները: Կրտսեր որդին՝ Սերոն, ըստ Աղունի գյուղի ապագան է, ըմբոստ, սակայն մորը ծառայելու պատրաստ մի պատանի: Սերոն մորն ,,ուղեկցում" է վիպակի սկզբից մինչև վերջ և քաղաք մեկնելու պատ-

րաստության ընթացքում մայրը զրուցում, խրատում, նախատում է որդուն, որով-

հետև որոշակի երազանքներ ունի նաև կրտսեր որդու ապագայի նկատմամբ, կա-

տակով նրան ,,պրոֆեսոր" է անվանում: Սերոն ևս նոր ժամանակների երի-

տասարդների նման ձգտում է քաղաք գնալ, սակայն հանդիպում է մոր համա-

ռության պատին: Նա պետք է մնար գյուղում, նա գյուղի, Աղունի, Սիմոնի բա-

ժինն էր: Ավագ որդուն՝ Արմենակին քաղաքը տարել էր, իսկ կրտսերը իրենցն էր:

նա Սերոյին հանձնարարականներ է տալիս, ընթացքում ի մի է բերում իր ան-

ցած ճանապարհը, իր զրկանքները, պապի և հորեղբոր վերաբերմունքը իր հան-

դեպ, ապա ,, գծում" էր որդիների հետագա կյանքը և ասում. ,,…կգաք, կասեք գե-

ղեզմանիս. այ մեր, մենք էն ենք, ինչ որ դու ուզում էիր…"(Երկեր,1985թ. հ. 2, էջ8):

Աղունի աշխարհայացքը ամբողջանում է հատկապես ավագ որդու վերաբեր-

յալ մտահոգություններում: Հանձին Արմենակի՝ նա իր չիրականացած երա-

զանքների մարմնացումն է տեսնում և ցանկանում է ամեն գնով նպաստել նրա

հաջողություններին: Սիմոնին մեղադրում է, որ անճար է. պիտի որդու ղեկա-

վարներին հրավիրեր գյուղ, հյուրասիրեր, որովհետև այդպես են անում քաղա-

քում ինչ որ բանի հասնելու համար: Նա պատրաստվում է քաղաք գնալու և

միևնույն ժամանակ մտովի խորհուրդներ էր տալիս որդուն ապրել ժամանակին համարժեք, որովհետև՝ ,,քո բաժին տանջանքը ես արդեն քաշել եմ” (Երկեր, 1985թ. հ. 2, էջ 42): Եվ եթե դուրս գանք այն հանգամանքից, որ Արմենակը Աղունի որդին է, ապա գրող Հրանտ Մաթևոսյանը հավանաբար նկատի է ունեցել իրեն, ,,սառած կարտոլի” մասին հիշողությունը իր ծանր մանկության տարիների արձագանքն է, և ինքը միշտ էլ ասել է, որ իրենք այդ ժամանակի ,,կարտոլի տղերքն են”:

Եզրակացություն

,,Աշնան արև” վիպակի բոլոր հերոսները լրացնում և մեկ ամբողջություն են դարձնում գյուղի մարդկանց բարոյահոգեբանական նկարագիրը: Այդ մարդիկ արդեն գուրս են գալիս նահապետականության կապանքներից: Գիտատեխնիկա-

կան հեղափոխությունը մուտք է գործել գյուղ, և գրականությունը չէր կարող ան-

ուշադրության մատնել իրականության վերափոխմանը: Փոխվում են ժամանակ-

ները, փոխվում է գյուղը, փոխվում են նաև մարդիկ, մարդկային հարաբերություն-

ները: Նահապետականի և նորի հակամարտության մեջ հակասություններով լի

ժամանակահատված է: ԵՎ այստեղից էլ, հատկապես միջին և երիտասարդ սե-

րընդի ներկայացուցիչների աշխարհընկալումն ու արժեքային համակարգի երկ-

վությունը:

Հերոսները յուրովի ինքնահաստատվում են, նրանց աշխհարընկալման դրսևո-

րումները ճանապարհ են հարթում արևի տակ իրենց տեղը ունենալու համար:

Օգտագործած գրականություն

1. Ս. Փանոսյան.- Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը. ԵՊՀ հրատ.

Երևան, 1984 թ.

2. Կ. Աղաբեկյան.- Հր. Մաթևոսյան. Ծմակուտի վիպասքը, ԵՊՀ հրատ. Երևան, 1988 թ.

3. Մ. Զաքարյան.- Հետարդիականության արժեքային համակարգը Հր. Մաթևոսյանի <<Աշնան արև>> վիպակում

4. Ինտերնետ պաշարներ

5. Հր. Մաթևոսյան, երկեր 2 հատորով, Երևան, 1985 թ.